ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

31 հոկտեմբերի 2022թ. թիվ 1162

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ Ա.ՀԱԿՈԲՅԱՆԻՆ
ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով «ՀՀ Պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի ռեկտորի պարտականությունները կատարողի 2022 թվականի հունիսի 7-ի թիվ 14/391 գրությունը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Արամ Գրիգորյանին և զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Արմեն Հակոբյանին 2022թ. նոյեմբերի 23-ից 25-ը ներառյալ՝ երեք օրով գործուղել ք.Երևան՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիա՝ «Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրություն» թեմայով վերապատրաստում անցնելու համար:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

31/10/2022

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 31
ք.Վանաձոր